



## **Արևային ոչ ճնշումային թերմոսիֆոն համակարգի թվային կարգավորման ուղեցույց**

- 1. Ստուգում .** Երբ միացվում է արևային ոչ ճնշումային թերմոսիֆոն համակարգի (այսուհետ՝ համակարգ) թվային կարգավորիչը (այսուհետ՝ կարգավորիչ), ձայնային ազդանշանը ցույց է տալիս կարգավորիչի նորմալ աշխատանքը:
- 2. Կարգավորիչի կոճակների նկարագրություն .** Pipe Temo Keep – նարնջագույն կոճակ – միացնում է տաքացվող լարը: Անհրաժեշտ է միացնել  $-5^{\circ}\text{C}$  աստիճան և ավելի ցածր ջերմաստիճանի դեպքում: Electric Heater / Water Temp – մանուշակագույն կոճակ – միացնում է էլեկտրական տաքացուցիչը: Մենյուի set՝ կապույտ կոճակը սեղմելուց հետո այն ավտոմատ միացնում է էլեկտրական տաքացուցիչը ֆիքսված ջերմաստիճանից իջնելու դեպքում: Ջերմաստիճանը անհրաժեշտ է կարգավորել նույն կոճակով: Մեկ անգամ սեղմելով՝ կարգավորվում է ձեռքով: Set – կապույտ կոճակ – մենյու, ընդհանուր կարգավորումներ կատարելու համար: Water load, water level – կանաչ կոճակ – ջրի մակարդակի ավտոմատ լիցքավորում էլեկտրամագնիսական փականի օգնությամբ: Սեղմած պահելով՝ միացվում է ավտոմատ:
- 3. Ջրի մակարդակի կարգավորում .** կարգավորումները կարող են լինել համապատասխանաբար 50%, 75% և 100%:
- 4. Ջրի ջերմաստիճանի կարգավորում .** ջերմաստիճանը կարող է կարգավորվել  $30-80^{\circ}\text{C}$  Եթե էլեկտրական տաքացուցչի միացման կարիք չկա, ապա պետք է ջերմաստիճանը նշել  $00^{\circ}\text{C}$ : էլեկտրական տաքացուցիչը ավտոմատ ռեժիմում միացնելու համար պետք է սեղմել մանուշակագույն կոճակը, պահել սեղմած վիճակում, ֆիկսել ցանկալի ջերմաստիճանը, թողնել կոճակը:
- 5. Համակարգում ջրի ջերմաստիճանի և ծավալի ցուցմունքները երևում են էկրանի վրա:**
- 6. Ձայնային ազդանշան ջրի ոչ բավարար մակարդակի դեպքում .** երբ ջրի ջերմաստիճանը իջնում և հասնում է նվազագույն մակարդակի, կարգավորիչը միաժամանակ տալիս է ձայնային ազդանշան, և ջրի մակարդակի 25%-ի ցուցմունքը սկսում է թարթել:
- 7. Ջրի ավտոմատ լիցքավորում .** երբ համակարգն աշխատում է ավտոմատ ռեժիմում, կարգավորիչը ավտոմատ կերպով լիցքավորում է համակարգը միջինում 30 րոպեի ընդացքում: Ջրի ավտոմատ լիցքավորումը ակտիվացնելու համար պետք է սեղմել և պահել կանաչ կոճակը:
- 8. Ջրի մակարդակի լիցքավորման <<ձեռքի ռեժիմ>> .** եթե ջրի մակարդակը համակարգում հավասարվել է նվազագույնին, սեղմելով <<water load / water level>> կանաչ կոճակը, համակարգը կլիցքավորվի մինչև սահմանված մակարդակը: Եթե ջրի մակարդակը հասել է 100%-ի, սեղմեք <<water load / water level>> ջրի լիցքավորումն անջատելու համար:
- 9. Ջրատաքացում <<ձեռքի ռեժիմ>> .** եթե ջրի ջերմաստիճանը համակարգում հավասարվել է նվազագույնին՝ սեղմելով <<heat up / water temperature>> մանուշակագույն կոճակը, համակարգը կտաքանա մինչև սահմանված մակարդակը: Եթե սեղմեք <<heat up / water temperature>> կոճակը կրկին, ապա համակարգը կդադարի տաքանալ էլեկտրական տաքացուցչի օգնությամբ:
- 10. Լիցքավորման և տաքացման ավտոմատ ռեժիմ .** եթե համակարգի համար ոչ մի պայման սահմանված չէ, ապա այն ավտոմատ լիցքավորելու է ջրի մակարդակը և էլեկտրական տեները

տաքացնելու է համակարգը արևի ճառագայթումից, տաք ջրի մակարդակից, սահմանված ջերմաստիճանից, եղանակից և հաճախորդի ցանկությունից կախված:

**11. Ցանկացած եղանակի ջրի մատակարարման ռեժիմ** . այս ռեժիմը նախատեսված է մեծ ծավալով ջուր սպառողների համար: Այս գործառույթը ողջ օրվա ընթացքում ավտոմատ կերպով կլիցքավորի և կտաքացնի ջուրը արևի ճառագայթներով օրվա մնացած ժամերին: Եթե ողջ օրվա ընթացքում արևի ճառագայթները չեն ապահովում ջրի անհրաժեշտ ջերմաստիճանը, կարգավորիչն ավտոմատ միացնելու է էլեկտրական տեներ, սահմանված ջրի ջերմաստիճանին հասցնելու համար:

**12. Հաստատուն ըաքացման ռեժիմ** . եթե ջրի բաքի ջերմաստիճանը ցածր է 30°C քան սահմանված մակարդակն է, այն ավտոմատ տաքացնելու է մինչև սահմանված մակարդակ ջրի ջերմաստիճանը հաստատուն պահելու համար: Եթե ջրի մակարդակը ցածր է 50%-ից, ապա կարգավորիչը ավտոմատ լիցքավորելու է ջուրը մինչև սահմանված մակարդակ, ապա նոր սկսելու է տաքացնել: Սա արվում է համակարգի դատարկ լինելու դեպքում դրա տաքացումից խուսափելու համար:

**13. Ջրի մակարդակի հաստատուն լիցքավորման ռեժիմ** . եթե ջրի մակարդակը ցածր է 75%-ից, այն ամբողջապես կլիցքավորվի 30 րոպեից: Այս գործառույթն ակտիվ է, եթե ջրի մակարդակը սահմանված է 100%:

**14. Ջրի լիցքավորման խթանիչ ռեժիմ** . երբ համակարգի տվիչն ունի խնդիր, պետք է սեղմել <<load water / water level>> կանաչ կոճակն այնքան, մինչև կարգավորիչը տա ձայնային մեկ րոպե տևողությամբ ազդանշան՝ համակարգի ամբողջապես լցված լինելու մասին: 8 րոպե անց ռեժիմը կանջատվի ավտոմատ կերպով:

**15. Ջրի լիցքավորումն ցածր ճնշման ժամանակ**. Ջրամատակարարման դադարի կամ ցածր ճնշման դեպքում կարգավորիչը ավտոմատ կերպով միացնում է ջրի լիցքավորման ցածր ճնշման ռեժիմը: <<All day water supply>>(կարգավորվում է մենյուի Set կապույտ կոճակով) կապույտ կոճակը կսկսի թարթել և ձայնային ազդանշանը կապասկտիվանա ողջ օրվա ջրի մատակարարման համար: Այս ռեժիմում կարգավորիչը կսկսի լիցքավորել համակարգը յուրաքանչյուր 30 րոպեից մեկ: Եթե հաջորդող 30 րոպեների ընթացքում ջրի մակարդակը չի բարձրացել գոնե մեկ մակարդակով, ապա պետք է դադարեցնել գործընթացը փս 30 րոպեով, որպեսզի համակարգում կատարվի ջրապտույտ և բաքը չվնասվի գերտաքացումից, մինչև ջուրը կհասնի 75% և ավել մակարդակի: Այս գործընթացն արվում է խուսափելու համար՝

1. Փականի և պոմպի առանց ջուր աշխատելու արդյունքում կոտրվելու հավանականություն,
2. Արտահոսքից, եթե ջուրն արտահոսում է արևային վակուումային կոլբայի վնասվածքի կամ այլ պատճառով, կարգավորիչը անդադար ջուր է լցնելու և ջրի արտահոսք է լինելու ինչպես բաքից, այնպես էլ տանիքից:

**16. Համակարգը անջատելու պարագայում այն ավտոմատ հիշում է վերջին կարգավորումը:**

**17. Տաքացվող լար** . 0-ից բարձր ջերմաստիճանի պարագայում անհրաժեշտ է միացնել տաքացվող էլեկտրական լարը՝ խողովակների սառելուց խուսափելու համար: Միացնելու համար սեղմել <<pipeline warming keep>> նարնջագույն կոճակը, որը ցույց է տալիս էկրանի վրա վառվող պատկերով: Այն կրկին սեղմելով տաքացվող լարը կանջատվի:

**18. Արևային վակուումային կոլբան կարող է կոտրվել, եթե այն առանց ջրի երկար ժամանակ գտնվում է արևի ճառագայթների տակ և դրա մեջ միանգամից ջուր է լցվում: Ջերմային շոկը կկոտրի վակուումային խողովակը:**

19. Բաքը չի կարելի երկար ժամանակ թողնել դատարկ վիճակում, դա կարող է հանգեցնել կցամասերի վնասման, արևի ճառագայթման պատճառով:
20. Հոսանքի տատանման ժամանակ, անվտանգության նկատառումներից ելնելով, անհրաժեշտ է ժամանակավորապես դադարեցնել համակարգից օգտվել:
21. Կարգավորիչը օժտված է կարճ միացումից պաշտպանող բաղադրիչով: Անհրաժեշտ է սեղմել << heating/water temperature >> մանուշակագույն կոճակը՝ տաքացումն անջատելու համար և սպասել որպեսզի նշանը դադարի թարթել, անյուևետև անջատել ջուրը: